ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մարտի 2014**թ.** **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 **ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ** 15-**Ի N** 10-**Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանի ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N10-Ա որոշման N2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գնումների վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	1	280000		280000

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «12» և «2506000» թվերը փոխարինել համապատասխանաբար «13» և «2786000» թվերով:

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «443» և «94542000» թվերը փոխարինել համապատասխանաբար «444» և «94822000» թվերով:

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «2.10 Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» ենթագլուխը լրացնել նոր 1.2 կետով.

1.2	համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	1	175000		175000

և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «7» և «1127000» թվերը փոխարինել համապատասխանաբար «8» և «1302000» թվերով, «Ամբողջը» տողի «29» և «6077000» թվերը փոխարինել համապատասխանաբար «30» և «6252000» թվերով, իսկ «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողում «1295» և «244800000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1296» և «244975000» թվերով:

4) «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1551» և «272097004» թվերը փոխարինել համապատասխանաբար «1552» և «272272004» թվերով,

5) «Ամբողջը» տողում «1994» և «366639004» թվերը փոխարինել համապատասխանաբար «1996» և «367094004» թվերով:

2. Սույն որոշման.

1) 1-ին կետի 1-ին ենթակետն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

2) 1-ին կետի 3-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի աշխատանքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և ստորև նշված հանգամանքներով՝

1. Հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքային ծավալների ավելացումը, ինչպես նաև առկա ծանրաբեռնվածությունը, նախատեսվում է լրացուցիչ ավելացնել 1 միավոր վարչության պետի տեղակալի հաստիք՝ Երևան համայնքի գնումների գործընթացն ավելի արդյունավետ իրականացնելու համար։

2. Հաշվի առնելով, որ Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում հաստիքացուցակով նախատեսված չէ գործավարի հաստիք և հիշյալ աշխատակազմում գործավարությունը պատշաճ կարգով ապահովելու նպատակով նախատեսվում է ավելացնել 1 միավոր համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավարի հաստիք։

Առաջարկվող փոփոխություններին համաձայնություն տալու դեպքում Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակում ներառված հաստիքային 1994 միավորների թիվը կավելանա երկուսով և այն կկազմի 1996 միավոր՝ 455000 դրամ ամսական աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, որն Երևանի 2014 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում՝ հաշվի առնելով աշխատավարձի ֆոնդի ակնկալվող տնտեսումները:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 15.06.2013թ. N10-Ա որոշման մեջ կատարել վերոհիշյալ փոփոխությունները և լրացումները։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014 թվականի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ